



**Միրելիներ,**

Ղուկասի Աւետարանում ընթերցում ենք. «Աշակերտներից երկուսը գնում էին էմմաուս անունով մի գիւղ, որ Երուսաղէմից հեռու է մօտ եօթ մղոն, եւ միասին զրուցում էին պատահած բոլոր անցուղարձերի մասին: Մինչ նրանք միասին խօսում էին ու պատճառաբանում, Յիսուս անձամբ մօտեցաւ նրանց եւ սկսեց նրանց հետ քայլել» (Ղկս 24, 13-15):

Ահա՛, ահա այն՝ ինչ հաճելի է Աստծուն ամէն ինչից աւելի. ներկայ լինել, մեր հետ քայլել: Նա ինքնըստինքեան արդէն Յաւիտենական Ներկան է: Միրոյ հեղեղն է, որի համար բացակայ լինել հասկացողութիւնը գոյութիւն չունի: Նրա համար, գոյութիւն ունեցող ոչինչ եւ ոչ ոք այլուր չէ:

Մեր պարագան տարբեր է: Միշտ պակասում է մեզ, ինչ որ մի բան կամ ինչ որ մէկը: Փորձառու եւ հմուտ մասնագէտներ ենք բացակայութեան, կղզիացումի ու դատարկութեան:

Ինչը մղում է Աստծուն մեծ կարեկցանքի, եւ Նա գալիս է:

Մինչ քայլում ենք դէպի ինչ որ մի «էմմաուս», որ երբեք վերջին նպատակակէտը չէ:

Աստուած գալիս է, Իր քայլերը միացնում է մեր քայլերին, կամենում է ասել մեզ. «Հիմա այստեղ եմ, ձեր հետ: Ձեր հետ լինելով է, որ ձեր Աստուածն եմ»:

Եւ սակայն, ո՛վ գիտէ՝ թէ մեզնից քանիններն են գիտակից, որ Նա այսպէս է վարում:

Ո՛վ գիտէ՝ թէ մեզնից քանիններն են շարունակում հոգեպէս միայնակ քայլել:

Մինչդեռ իսկապէս երջանիկ կը լինէինք, եթէ յիշէինք՝ որ Նա՛ է նախ մօտենում, նաեւ առանց մեր կանչելուն: Կը հասկանայինք իրական չափը Նրա սրտի եւ սիրոյ:

Տէր, միացիր մեր քայլերին ու մեր ընթացքին:

Գու չես յանդուրժում մեր միայնութիւնը, մեր տրտմութիւնը կանչում է Քեզ ամէն օր: Մենք չէինք կարող յուսալ, բայց Գու, մեծ Մէր, հաւատարիմ ես: Յոյսով ամրապնդուած չէին այն երկու ընկերները, եւ խօսում էին: Գու, երրորդ Ընկերը, նրանց սիրում էիր: Տարբերութիւնն այստեղ է, վիթխարի տարբերութիւնը: Գու ես, բացակայութիւնների քաղցր լիացնող, Գու ես Տէրը:

**ՈՒՐԱԽ ԱՄԱՀՈՐ ՁԵՁ, ԵՐՁԱՆԿ ԿՈՐ ՏԱՐԻ**

**ԲԵՐԿՐԱՆՔՈՎ ԼԻ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ**